Հաստատում եմ
Հյուսիսային համալսարանի ռեկտոր՝
02. 05. 2016թ. Բ. Մ. Մակիչյան

Կարգ

Հյուսիսային Համալսարանի

«Ուսանողների կարիքների վերհանման լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների վերաբերյալ»

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսանողների կարիքների վերհանման լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների կազմակերպման նպատակով Հյուսիսային Համալսարանում ստեղծել **կուրսային խորհրդատուի** ինստիտուտ:

1.2 «Ուսանողների կարիքների վերհանման լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների վերաբերյալ» կարգը սահմանվում է Հյուսիսային Համալսարանում անձնային ու միջանձնային հարաբերությունները կարգավորելու, կարգապահությունը բարձրացնելու, ինչպես նաև մանկավարժական գործընթացն արդյունավետ դարձնելու նպատակով:

1.3 Կուրսային խորհրդատուների ընտրությունը, համապատասխան ամբիոնների դասախոսներից, կատարվում է դեկանների և ամբիոնի վարիչների կողմից հաշվի առնելով դասախոսների և ուսանողների կարծիքը:

1.4. Կուրսային խորհրդատուի աշխատանքը կարող է դադարեցվել հետևյալ հիմքերով.

- Խորհրդատուի հիմնական աշխատանքից ազատվելու դեպքում
- Խորհրդատուի ինքնակամ հրաժարականի դեպքում
- Խմբի ուսանողների մեծամասնության հիմնավորված պահանջի դեպքում

- Բուհի ղեկավարության պահանջով

2. Կուրսային խորհրդատուի գործունեության բովանդակությունը ժամանակակից պայմաններում

Կուրսային խորհրդատուի գործառույթները ներառում են հետևյալ բնագավառները.

2.1. Ուսանողների ուսումնական գործընթաց

2.2. Ուսանողների արտաուսումնական գործունեություն

2.3. Ուսանողների անհատական խնդիրներ

2.4. Խմբում միջանձնային հարաբերություններ

2.5. Սոցիալական կարևորություն ունեցող հասարակական խմբերում ներգրավածություն:

3. Կուրսային խորհրդատուի գործառույթները ուսանողների հետ տարվող աշխատանքներում

3.1. Ուսանողին օգնում է հարմարվելու ուսումնակրթական նոր համակարգին

3.2. Իրավունքների և պարտականությունների գիտակցում

3.3. Ուսանողների և դասախոսների միջև բարիդրացիական հարաբերությունների ստեղծում

3.4. Ծանոթացում բուհի մանկավարժական գործընթացին

3.5. Ծանոթացում ներբուհական օրենքներին ու կանոններին (Համալսարանի կանոնադրություն, ներքին կարգապահական կանոններ, մասնագիտական ուսումնական պլաններ և այլն)

3.6. Ծանոթացում բուհի նոր կանոնակարգերին (հրամաններ, հրահանգներ)

3.7. Իրականացնում է հաճախումների նկատմամբ վերահսկողություն

3.8. Քննարկում է առաջադիմության հետ կապված հարցեր, վերլուծում որոշ ուսանողների ուսման մեջ հետ մնալու պատճառները և դրանց հաղթահարման ուղիները

3.9. Կոնֆլիկտային իրավիճակների և վիճելի հարցերի լուծման անմիջական մասնակցություն

3.10. Աշխատանքի կառուցման հիմքում դնում է ուսանողների նկատմամբ անհատական մոտեցումը, հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները, կենցաղն ու առողջական վիճակը

3.11. Աջակցում է ուսանողների ներգրավվածությունը գիտա-հետազոտական, կուլտուր-մշակութային և սպորտային միջոցառումներին ու աշխատանքներին

3.12. Կազմակերպում է ուսանողների առողջ ապրելակերպի ձևավորմանը նպաստող միջոցառումներ և կանխանգելիչ քարոզներ ձեռնարկում ոչ համարժեք վարքի դրսևորումներն ուսանողների շրջանում

3.13. Ուսանողների հետ արտաուսումնական հանդիպումների կազմակերպում (խորհրդատուի ժամ)

3.14. Ամբիոնների վարիչներին և պարբերաբար դեկանատներին տեղեկատվություն է փոխանցում ակադեմիական խմբերում տիրող իրավիճակի մասին

3.15. Ուսման մեջ հետ մնացող ուսանողների ծնողներին գրավոր տեղեկացնում է ուսումնական կիսամյակի բաց թողումների մասին

4. Խորհրդատուի աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշները

4.1.Ակադեմիական խմբերի մեջ ունեցած վարկանիշը (հաճախումներ, առաջադիմություն)

4.2. Մասնակցություն դաստիարակության հայեցակարգի աշխատանքների իրականացմանը

4.3. Աջակցություն խմբերում ուսանողական ակտիվների ձևավորման գործընթացին (խմբի ավագ, ուս.խորհուրդ և այլն)

4.4. Խմբերի ուսանողների մասնակցությունը գիտական, մշակութա-հասարակական և սպորտային միջոցառումներին

4.5. Խմբերի ուսանողների մասնակցությունը հասարակական հանրօգուտ աշխատանքներին և ներխմբային միջոցառումներին

4.6. Տեղեկատվական աշխատանքներ ուսանողների և նրանց ծնողների հետ

4.7. Խորհրդատուի աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների ներդրում և կիրառում

5. Կուրսային խորհրդատուի աշխատանքի սկզբունքները

5.1.Խորհրդատվությունը, որպես առաջատար գործունեության սկզբունք

5.2. Մարդասիրական սկզբունք

5.3. Համալիր մոտեցման սկզբունք

5.4. Անհատական առանձնահատկությունների հաշվառման և համակարգվածության սկզբունք (խորհրդատվությունը որպես մանկավարժական ազդեցություն)

5.5. Նպատակաուղղվածության սկզբունք

5.6. Օբյեկտիվության սկզբունք

5.7. Վճռականության սկզբունք

5.8. Աշխատանքների թափանցիկության սկզբունք